Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒԼԻՍ 1 1893 ԹԻՒ 12

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

ՏԷՐ ԵԶՆԻԿ ԵՊ. ԱՊԱՀՈՒՆԻ

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքականութիւն Հայոց և Քաղաքականութիւն Օսմանցւոց.— Նոր Հրատարակութիւն.— Հայերէն Լեզուն. Ը տառն արդի հայերէնին մէջ.— Նամակ Կ. Պոլսէ.— Վախճան Հայոց "Հայրենասիրական Միութեան"— Ամերիկայի Հայերն. Ամուսնութեան խնդիր.— Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր։

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անուանն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Տէր Եղնիկ եպ. Ապահունեաց պատկերն, զոր այս անգամ կը հրատարակեմք, մասնաւոր հետաքրքրութեամբ պիտի դիտուի իբրեւ միոյն ի նշանաւորագունից այժմու հայ եկեղեցականաց։ Նորա բնաւորութեան և գործունէութեան մասին տեսնել «Հայքի» սոյն Գ. տարւոյ երկրորդ թիւն։

*

* *

Ազգային Քաղաքականութեան վերայ ձեռնհաս գրողաց յօդուածք մեզ հասած չլինելով դեռ, այս անգամ մեր երկրորդ ուսումնասիրութիւն կը հրատարակեմք նոյն մեծ խնդրոյ վերայ։ Ներկայ յօդուածն այնո՛ւ կը տարբերի նախորդէն զի ոչ լոկ համազգեաց ուղղեալ է գործնական տեսակետով, այլ աւելի ընդհանուր տեսակետէ կը նայի խնդրոյն և կը խօսի օտարաց ու համազգեաց միանգամայն։ Ազգ. Քաղաքականութեան վերայ մեր սոյն ուսումնասիրութիւն կը պարզէ օսմանեան քաղաքականութիւնն իւր բոլոր տհաւորութեամբ, և Դրան կողմանէ բարեկարգութեան ամեն ակնկալութիւն արմատախիլ անելով՝ կը հաստատէ թէ հարկ է որ Հայաստան ազատի Թրքական վարչութենէ և ինքնօրէն լինի։

Կը համարձակիմք ասել թէ այն օտարական դիւանագէտք, ուղեւորք և միսիոնարք որք Թուրքիոյ վերայ գրած են, վրիպած են Ոսմանցւոց խորհելու կրօնական եղանակն ըմբռնելէ այն ճշդութեամբ զոր Թրքաց հպատակ հայ խորհողն կրնայ, որպէս կարծեմք պիտի ցուցնէ մեր այս երկրորդ ուսումնասիրութիւն։

*

* *

Հայերէն լեզուի վերայ մեր ներկայ յօդուած, իբրեւ լրացուցիչ նախորդ թրուոյ յօդուածին, աւելի պիտի պարզէ մեր լեզուական դաւանանքի սկզբունքն, և ընթերցողք պիտի տեսնեն, յուսամք, թէ «Հայքի» հայերէնին ինչ ինչ իւրոյն հանգամանք ողջամիտ և ազգային ոգիէ ներշնչեալ դրութեան մի կը պատկանին։

Բ. Ուսումնասիրութիւն

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ

ՊԷՏՔ Է ՈՐ ՀԱՅՔ ԻՆՔՆՕՐԷՆ ԼԻՆԻՆ

Օսմ. Պետութիւնն ներսէն և դրսէն դիտողներն բնական է որ այլև այլ հայեցողութիւններ ունենան նորա այժմու վիճակին և ապագային նկատմամբ։ Այդ պետութեան վիճակն ոչ միայն զայն բաղկացուցնող ժողովրդոց այլև Եւրոպայի համար մեծ խնդիր է։ Ի հարկէ խնդիրն աւելի մեծ է բուն Թուրքիոյ ժողովրդեան համար քան Եւրոպայի. Բայց նախ և առաջ Եւրոպա զբաղած է «Արևելեան Խնդրով» իւր շահու տեսակետով, եւ մըտած է Թուրք կառավարութեան հետ դաշնակցական յարաբերութեանց մէջ, մինչև մէկ աստիճան հսկողի և պաշտպանի դեր յանձն է առած Թուրքիոյ նըկատմամբ որպէս զի զայն ալ Եւրոպայի նմանցունէ, արևմտական քաղաքրթութեան շաւղին մէջ մտցունէ։

Արժան է որ մօտէն և ուշի ուշով քննեմք թէ ինչ եղած է Եւրոպեան այդ հոգածութեանց արդիւնքն։ Հարկ է զայս անել նախ որպէս զի Եւրոպա ըստ այնմ շարունակէ իւր հոգածութիւն կամ եղանակաւորէ, և երկրորդ որպէս զի Թուրքիոյ բնիկ ժողովուրդք գիտնան թէ որքան յոյս կրնան դնել Եւրոպայի հոգածութեան վերայ։

Այնմ որ դրսէն կը նայի Թուրքիոյ վիճակին, 30—40 տարիէ ի վեր շատ բան փոխուած կ'երեւի անշուշտ։ Կառավարութեան դրութեան մէջ նոր շրջանակներ ստեղծուած են, Եւրոպական բազում ձեւակերպութիւնք մուտ գտած են, կառավարութեան և ժողովրդեան փոխադարձ յարաբերութեանց վերաբերութեամբ նոր կարգադրութիւնք և օրէնք ներմուծուած են, օրինագրոց հատորք ամ ըստ ամէ ստուարացած են, նորանոր նախարարութիւններ և պաշտօնէութիւններ յօրինուած են, կրօնական ազատութիւն, զանազան ցեղերու հաւասարութիւն հռչակող հրովարտակներ հրատարակուած են։ Մինչև անգամ կարգադրութիւն եղած է որ երկրին տիրող և տիրեալ ցեղերուն հաւասարութիւնն հանապազ յիշեցունելու և հաստատելու համար ամենն ալ անխտիր ՕՍՄԱՆՑԻ կոչուին։ Այո՛, այս ամենն եղած է, այո՛, օսմանցին իւր հանդերձ փոխած է, շատ բաներու ձեւն ու անուն փոխած է, այսու ամենայնիւ Օսմանցին այն հին Օսմանցին մնացած է, և ամեն պատճառ կայ հաւատալու թէ նոյնն պիտի մնայ և այսուհետեւ։

Կարեւոր կետ մի կայ. պէտք է գիտնալ թէ Թուրքիա չի բարեկարգուիր ոչ վասըն զի Թուրքք դժուարութեան հանդիպած են, այլ մանաւանդ վասն զի բնաւի սրտէ և լրջօրէն բարեկարգութեան չեն աշխատած։ Օսմանցին իրօք ամենեւին չէ արած ինչ որ պարտէր անել յանուն բարեկարգութեան։ Ցիրաւի կրօնական ազատութեան հրովարտակ տուած է, բայց բուն կրօնական ազատութիւն՝ ո՛չ երբէք։ Հաւասարութեան հրովարտակ հանած է, բայց բնաւ չէ հաւանած որ իսլամ և ոչ-իսլամ հպատակք հաւասար կարենան լինիլ։ Արդարեւ նոր օրէնքներ, նոր պաշտօնէութիւններ, նոր պաշտօնեաներ հաստատուած են, բայց ոգին առջի ոգին է, եղանակն հին եղանակն է։

Ուշադրութեան արժանի ուրիշ կարեւոր կետ մ'ալ կայ։ Թո՛ղ ներքին իրական բարեկարգութիւններն. նոյն իսկ արտաքին պատիր փոփոխութիւններն, օրէնքներու և հրովարտակաց հրատարակութիւններն տհաճութեամբ և ի հարկէ դիւանագիտութեան ըրած է Թուրքն։ Ինքզինք ի կայի պահելու համար Եւրոպայի հաւաքական կռնակին կռթնիլ կամ Մեծ տէրութեանց միոյն յենուլ եղած է իւր ջանք, և կռթնիլ կարենալու համար կեղծ բարեկարգութիւններն և սուտ յանձնառութիւններն իբրեւ միջոց գործածեր է։ Միանգամայն ինքն իւր մտին հաստատ դրած է թէ այդ ամենն թղթի վերայ պիտի մնան իբրեւ մեռեալ տառ։ Ո՞վ չի գիտէ թէ այս կերպիւ բարեկարգութիւն

ՀԼԻՆԻր։

Բոլոր հին ու նոր դաշնագրոց արդիւնքն Թուրքիոյ բարեկարգութիւնն չէ եղած և չկրնար ալ լինիլ, քանի որ այդ դաշնագիրներն ստորագրելու ատեն ոչ միայն օսմանցւոց այլ և եւրոպացւոց ալ բուն և ներքին նպատակն Թուրքիոյ բարեկարգութիւնն եղած չէ։ Եւրոպիոյ և Թուրքիոյ միջև կատարուած դաշնագրութեանց նպատակն եղած է Մեծ Պետութեանց իրարու միջեւ կշիռն պահպանել, իրարու հանդէպ իւրաքանչիւրի կացքն ու իրարու միջեւ իւրաքանչիւրի դիրքն ուղղել, ճշդել, ոչ թէ զԹուրքիա բարեկարգել։ Ըսել չեմք ուզեր, սակայն, թէ այդ դաշնագրեր բնաւ ազդեցութիւն ունեցած չեն Թուրքիոյ ներքին վիճակին վերայ։ Թուրքիոյ ներքին անհանդստութեանց գլխաւոր պատճառն անոնք եղած են։ Ժողովուրդն դիւանագիտական միջազգային խաղերն չհասկնալով, իւր վիճակին բարւոքումն յուսացած է դաշնագրական այդ մեծագոռ համաձայնութիւններէ, այդ նորանոր օրէնքներէ ու հրովարտակներէ, և երբ երկար սպասելէ յետոյ յուսավրէպ եղած է, բնականօրէն անհանդարտութիւն դժգոհութիւն և յուզում զգալ սկսած է։ Այս նորածին և յարաճուն դժգոհութեան վերջ տալ անհնար պիտի լինի ցորչափ յոյսք չիրանան կամ չմարին։

Արդեօք կրնա՞ Եւրոպա սպասել և Հայն յուսալ թէ բարեկարգութիւնք ի գործ պիտի դրուին տակաւ՝ այսուհետև, մանաւանդ եթէ դաշնագրող տէրութիւնք աւելի ճնշում ի գործ դնեն և Հայք աւելի համբերեն։ Կրնայ ասուիլ թէ երկիր մի բարեկարգել մեծ գործ է, և Բ. Դուռն աւելի երկար ժամանակի կարօտ է այդ ահագին գործ կատարելու համար։ Այդ դիտողութիւն արդար պիտի լինէր, եթէ Դուռն փափաքող լինէր գործելու և միայն դժուարութե՛անց պատճառաւ արգիլուած լինէր։ Եթէ Դուռն անկեղծ հետամուտ լինէր բարեկարգութեան, օտարաց աւելի ճնշում ի գործ դնելն աւելորդ և Հայոց անհանդարտութիւնն յանցանք եղած պիտի լինէին։

Ուրեմն պէտք է որ քիչ մ՚աւելի խորամանեմք խնդրոյն մէջ, և ցուցնեմք թէ Թուրք կառավարութիւնն աւելի դժկամակ է քան անկարող բարեկարգելու զերկիրն։— Թէ նա, թէև կարենար, պիտի չուզէր, և եթէ ուզէր իսկ պիտի չգիտնար թէ ի՛նչ է բարեկարգել։

Ցիրաւի, ինչ որ օսմանցին բարեկարգութիւն կը կարծէ, չէ՛ այն զոր Եւրոպա կը սպասէ և զոր քրիստոնեայ հպատակն կը պահանջէ։

Մէկ բան կայ զոր Օսմանցին ճշմարիտ բարեկանգութիւն, ճշմարիտ յառաջդիմութիւն և ճշմարիտ քաղաքակրթութիւն կը համարի, այն է իսլամութեան յառաջ երթալն։ Նորա ըմբռնմամբ կրօն և կառավարութիւն անխզելի կերպով իրարու կապուած են, և անայլայլելի է այդ երկուքի առընչութեանց բնութիւնն։ Կառավարութիւնն կապուած է կրօնին՝ այնմ արբանակելու համար։ Կրօն, ճշմարիտ կրօն, այն է զոր Մուհամմէտ յատուկածուստ առնլով՝ ուսուցած է իբրեւ կրօնից վերջինն ու կատարեալն։

Կառավարութիւն կը նշանակէ սուր, զօրութիւն, որոյ նպատակն է ոչ ժողովրդին բարօրութեան ծառայել այլ զկրօնն պաշտպանել և տարածել։ Ամենայն բարիք և օրհնութիւնք իսլամի մէջ բովանդակեալ լինելով՝ մարդկային ցեղին ուրիշ բան պէտք չէ բայց եթէ իսլամի կրօնն։ Սուրն նախ ծնունդ է կրօնի։ սրոյ գործածութիւնն ի ձեռս Մուհամմէտի ծառայած է նախ զկրօնն թշնամեաց մէջ պաշտպանելու, ապա զայն ծաւալելու։ Կառավարութեան գաղափարն ցայսօր այդ կերպիւ կ՚ըմբռնուի Օսմանցւոց մէջ։ Առ ի՞նչ պիտանացու են Սուլթան, բանակ, զօրութիւն եթէ կրօնին պաշտպանութեան և ծաւալման չպիտի ծառայեն։ Սուլթանն Մարգարէին խալիֆայն է և միանգամայն փատիշահ։ բայց նախ և յառաջ խալիֆա և ապա փատիշահ։— փատիշահ է չնորհիւ այնր զի խալիֆայ է։ և այն վայրկենին ուր նա դադարի կամ թուլանայ խալիֆայութենէ, կը կորուսանէ բնականօրէն նաև իւր փատիշահութիւն։

Այս ըմբռնումն մահմետականութեան հիմնական ըմբռնումն է։ և անհնար է խախտել զայն հաւատացեալին հոգւոյն մէջ։ Եթէ Եւրոպա զայս քաջ հասկցած լինէր, կեղծ ցոյցերէ չպիտի պատրէր երբէք։ Մեք քրիստոնեայ հպատակքս ալ քաջ հասկացած չեմք զայդ, կամ մանաւանդ չէինք մինչեւ վերջին ժամանակները— թէ Օսմանցին չկրնար կրօնից ազատութիւն և ցեղերու հաւասարութիւն ճանաչել առանց իւր կրօն նախ ուրանալու։

Ի՞նչ, միթէ ա՛լ կառավարութիւն կամ թագաւորութիւն կրնա՞յ սեպուիլ այն որ չի պիտի ծառայէ իսլամութիւնն ծաւալելու։ Ի՞նչ, ճշմարիտ մարգարէն ու կրօնն ուրացողներն ալ ճշմարիտ մա՛րդ սեպուին, իբրեւ մա՛րդ կառավարուին, և մինչեւ անգամ կառավարե՞ն ալ։— ահաւոր հայհոյութիւն։

Ո՛չ օսմանցին չի՛ կրնար ընդունիլ որ անհաւատ հպատակներն իրեն պէս ազատ, իրեն հաւասար, բարօրիկ, հանգիստ և փառաւոր լինին, քանզի բարօրութիւն և յաջողութիւն միայն հշմարիտ կրօնի պարգեւներն են։ Առանց իսլամի երկրաւոր բարօրութիւն և փա՛ռք վայելելու հնարաւորութիւնն անընդունելի է Թրքին, զի կրօնի նպատակին հակառակ կուգայ և գայթակղեցուցիչ հակասութիւն կը լինի։ Նորա ըմբռնմամբ «կեավուր» կամ անհաւատ բառն հոմանիշն է թշուառութեան, մոլորութեան և անիծեալ վիճակի։ Կեավուրն ո և է փառաց անարժան է և ո՛և է բարիք անոր չվայլեր։ Անոր թշուառութեան դարմանն ալ ի հարկէ զիսլամ դաւանիլն է, ոչ թէ կառավարական բարեկարգութի՛ւն և ուրիշ անհեթեթ կարգադրութիւնք։

Օսմանցւոց ըմբռնմամբ զհիշդն ասելով՝ կեավուրն ապրելու ալ իրաւունք չունի. բայց օսմանցին հայ և յոյն հպատակացն մէկ մասն միայն որոյ կեր տուած և մեծ մասին թոյլ տուած է ապրիլ, և այդ ալ որոշ պայմանաւ։ Այդ պայմանն է գերութիւն։ Գերութիւն բառն չեն գործածեր, բայց ճիշդ այդ է նշանակութիւնն այն վիճակին յորում կրնայ և պարտի ապրիլ կեավուրն։ Կեավուրն կրնայ ապրիլ իբրեւ միջոց հաւատացելոց բարօրութիւնն աւելցուցնելու, անոնց հանգստութեան, վայելքին ծառայելու։ Օսմանցին զինուոր, զուրանի ուսանող, զուրանի ուսուցիչ, կառավարիչ կը լինի, որոց ամենն ալ կրօնի ծառայել ասել է. իսկ կեավուրն ստորին և գծուծ գործերով պիտի զբաղի, իբրեւ երկրին գործաւորն, արհեստագործողն— իբրեւ դերձակ, կօշկակար, ներկարար, հիւսն ևն։ Եւ կեավուրն ինչ լաւ բանի տէր որ լինի, ամենն «հէլալ» է Օսմանցւոց,— լինի գեղեցկութիւն, լինի ստացուածք. և կեավուրն իրաւունք չունի տրտնջելու եթէ իւր ո և է մէկ բանն առնուի իրմէ, քանի որ կեանքն կը շնորհուի իրեն։

Եւ կեավուրն այս ամեն ծառայութիւններն պարտաւոր է մատուցանել իւր բարերար տերոց՝ ամենայն խոնարհութեամբ, գլուխն ցած բռնելով, ցած խօսելով, միշտ «շնորհակալեմ» «ծառայ եմ» «ոտաց հող եմ» ասելով։

Այդ է ահա առընչութիւնն որ կայ և միշտ պէտք է լինի Թրքին ու Հայուն միջեւ— ոչ թէ հաւասարութիւն, օ՜, ո՜չ, քա՛ւ լիցի։ Հաւասարութի՛ւն, այդ պիտի նշանակէր իսլամն ուրանալ։

Գուցէ մեր այս ասից դէմ յառաջ բերել ուզեն ոմանք ինչ որ եղած է անցեալ 30—40 տարուան մէջ, այսինքն նոր օրէնքներն, հրովարտակներն, մանաւանդ քրիստոնեաներու ընդունուիլն պետական ծառայութեանց մէջ. հայ և յոյն դիւանագէտներն ու նախարարներն ի ծառայութեան Բ. Դրան. և Սահմանադրութիւնն որ շընորհուեցաւ Հայոց իբրեւ առանձին քրիստոնեայ ազգի։

Այդ ամենն կը ծառայեն այժմ մեր փաստ աւելի զօրացուցնելու։ Դոքա իբրեւ փորձ անյաջող ելած լինելով, ապագայ փորձերու սպասելու ալ տեղի չեն թողուր։ Այդ ամենայն, արդէն ասացինք, Օսմանցւոց կողմանէ յօժարութեամբ եղած բաներ չէին, այլ Եւրոպայի ճնշման ներքեւ եղած զիջումներ։ Եւ ինչ որ աւելի ահաւոր կերպիւ երևան կը բերէ այդ միջոցներու ունայնութիւնն, այն է թէ Օսմանցիք չուտով զղջացին այդ նախափորձ կեղծ բարեկարգութեանց համար։ Հաւասարութեան այդ պատիր երևութէն անգամ գայթակղեցան։ Զգացին խղճի խորին խայթ և սպաննեցին զՍուլթան Ապտ-Իւլ-Ազիզ, որ հաւասարութեան ու ազատութեան նման բաներ տուեր էր քրիստոնէից, և Հանեցին ի գահ զմեծ փաթիշահն Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ, որ իբրեւ ճշմարիտ մահմետական, 15 տարիէ ի վեր իւր բոլոր ջանք ի գործ կը գնէ աւրելու ինչ որ իւր նախորդ չինել փորձած էր և զերկիրն դարձեալ առջի բարի օրերուն վերադարձուցնելու, — քրիստոնեաներն ինենց առջի խոնարհ տեղն նստեցուցնելու, և Օսմանցւոց տալու բարձր դիրքն որ կը վայլէ միայն հաւատացելոց. ինքնավարութեան չողորդն եղող Սահմանութիւնն, գայթակղութեան այդ քարն, ի միջոյ բառնալու, և ևս հայ պետական

պաշտօնէից տեղ Թրքեր դնելու, և այլ այսպիսիբարեկարգութիւններ իրագործելու։

Այո՛, ճիշդ այդ է ճշմարիտ բարեկարգութիւն յաչս Օսմանցւոյն։ Սուլթան Ազիզի օրով կարգերն, աստիճաններն, յարաբերութիւնք հաւատացեալոց և անհաւատից քիչ մի խանգարեալ էին, պէտք էր դարմանել այդ սխալներ, և վառել ի սիրտս օսմանցւոց առջի կրօնական սուրբ հուրն, և փութալ անհետ անել երկրէն այն ամեն գայթակղալի փոփոխութիւններն, որ թէև կեղծ, տակաւին ամբարիշտ փոփոխութիւններ էին իբրեւ նշան կրօնական թուլութեան և իբրեւ սկիզբն Իսլամի անկման։

Ղազամիտ Օսմանցիք գոհ են տեսնելու որ ի ձեռն Սուլթան Ազիզի անկման զառիթափին վերայ մղուած պետութիւնն՝ չնորհիւ մեծ սուլթան Համիա կայսեր դարձեալ սկսած է հաստատուիլ իսլամութեան ողջամիտ և ուղղափառ սկզբանց վերայ, և կը յուսան թէ Ալլահ ներելով անցեալ տկարութեանց, կը հաչտուի և կը զօրացունէ խալիֆային Սուրն որ զիսլամ փառաւորելու և ծաւալելու կը նուիրուի նորոգեալ եռանդեամբ։

Այդ է ահա Օսմանեան քաղաքականութիւնն, որոյ մեծ ախոյեանն է ներկայ Սուլթանն։ Օսմանեան քաղաքականութիւնն կրօնական է իսկապէս, խստիւ և բոլորովին մահմետական։

Եւրոպա չարաչար կը սխալի եթէ կը յուսայ թէ Օսմանցիք կրնան բարեկարգել զՀայաստան։ Մեք Հայքս ալ բոլորովին տխմար պէտք է համարուիմք եթէ այսչափ ատեն օսմանցւոց ափին մէջ մնացած լինելով իսկ՝ չեմք ըմբռներ նոցա քաղաքականութիւնն և կը բաղդեմք կեղծաւորաբար թէ Նախախնամութիւնն զմեր քրիստոնեայ ազգնյանձներ է ի խնամս և ի պաշտպանութիւն Օսմանցւոց։

Մեր պարտականութիւնն է Եւրոպայի բացատրել օսմանեան քաղաքականութեան խորին կրօնական բնութիւնն, և զգացունել նմա թէ ո՛ և է կերպիւ, դիւանագիտական ճնշմամբ և հաւաքական ծանուցագրերով, նոյն իսկ բանակներու ուժով, հնար չէ՛ զՕսմանցիս ստիպել որ զերկիրն բարեկարգեն եւրոպական հասկացողութեան համաձայն։

Աւելի յստակ և որոշ լինելու համար ասենք թէ Եւրոպա իրաւունք չունի օսմանցիէն խնդրելու որ երկիրն բարեկարգէ և զքրիստոնեայ հպատակներն գոհ անէ, քանզի այդ պահանջ դէմ է Միւսլիւման խղճմտանաց, զայդ պահանջել կրօնն ուրանալու պահանջ անել է։

Այս ամեն խորհրդածութեանց եզրակացութիւնն է

—Թէ Թուրքն իւր իսլամական սրբազան պարտաւորութիւն կը համարի չբարեկարգել զՀայաստան, և ստրկութեան մէջ պահել հայ հպատակներն։

—Թէ դիւանագիտական ճնշումն սաստկացունել կամ ուրիշ ոևէ միջոց օգուտ չպիտի անէ Թրքաց ընթացքն փոխելու ցորչափ Թրքաց կրօնն չփոխուի, հետեւապէս Եւրոպա պարտի, եթէ անկեղծօրէն կը բաղձայ հայաբնակ գաւառաց բարեկարգութեան, ինքնօրէն անել զՀայաստան, Բ. Դրան հարկատու իշխանապետութիւն մի, որ ինքզինք բարեկարգէ քաղաքակրթութեան և քրիստոնէական լայն սկզբանց համաձայն։ Այսպէսով Օսմանցւոց խիղճն ու Հայոց իրաւունքն միանգամայն յարգած պիտի լինի Եւրոպա։

Մեր Ազգային Քաղաքականութեան կարեւոր մէկ կետն ալ կրնայ վճռուիլ այժմ, այն թէ ոչ միայն անհնար է որ գաւառացի Թուրքեր համակրին մեր դատին, այլ և անկարելի է զայնս ոևէ կերպիւ ոտքի հանել իրենց զեղծ կառավարութեան դէմ։ Թուրքք ամեն բանի կրօնական տեսակետէ կը նային, և եթէ դժգոհ լինելու բան մի կայ իրենց համար այն ալ ոչ թէ այն է թէ տէրութիւնն բռնապետական է, (զի այդ բնական և օրինաւոր է յաչս նոցա), այլ այն իսկ զի կեավուրներուն «երես» տրուած է Սուլթան Ազիզի օրով, և այժմ «աստառ»կուզեն։ Քրիստոնէից ազատութեան համն այդչափ մի առնուլ տալն մեծ մեղք կը համարին իրենց և զայն քաւելու համար, համաձայն են փատիշահին հետ՝ թէ պէտք է կեավուռներն ջախջախել ու վար նստեցունել։

Այն օսմաներէն գրով յայտարարութիւններն որ մի քանի ամիս առաջ փակցուած էին Փոքր Ասիոյ մէջ, ահագին սքանչալի մի եղած պիտի լինէին եթէ հայ յեղափոխականաց կողմանէ փակցուած լի նէին, քանզի այդու փոխանակ Թուրք խուժանն իրենց փատիշահին դէմ հանե-

լու պիտի դրդուած լինէին նոյն իսկ քը-րիստոնէից դէմ, ինչպէս որ արդարեւ ե-ղաւ արդիւնքն։ Մեր մէջ կուսակցութիւն մի կայ որ Թրքաց հետ գործակցելու կամ գոնէ զանոնք ալ ընդդէմ կառավարու-թեան շարժելու գաղափարն երբեմն կը ջատագովէ, ինչ որ յայտնի կը ցուցնէ թէ կուսակցութեան պետերն ի Թուրքիա մեծցած չեն և չեն հասկանար զԹուրքն որպէս պարտ է։

Գիտցէք, եղբա՛յրներ, թէ մինչև իսկ լուսաւորեալ համարուած Թուրքերն, ցորչափ հաւատացեալ միան, չեն կրնար մեզ համակրելու կամ իրենց խալիֆային դէմ ելնելու ամբարշտութիւնն գործել։ Զգուշանալ պէտք է թուրք խուժանէն։ Անդէպ ցոյցերով նորա կատաղութիւնն գրգռել և աւելորդ արհաւրաց ու արիւ-նայեղութեանց պատճառ տալ մեծ սխալ է։ Արիւն թափելն ալ իւր տեղն, ժամա-նակն ու չափն ունի։ Տնտեսե՛նք մեր ա-րիւնն ալ ինչպէս մեր բոլոր ուժերն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(«Հայք»էն հանուած)

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղե-ցունելու և կարող գրիչներն նոյն կենսա-կան խնդրոյ վերայ շարժել տալու նպա-տակաւ ի լոյս ընծայուած է այս ուսում-նասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Ը ՏԱՌՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻՆ ՄԷՋ

Լեզու մի յընթացս դարուց կրնայ կրել երկու կերպ փոփոխութիւն, յառա-ջադէմ և յետադէմ։ Լեզուի մշակներն պարտին յարգել այն ամեն փոփոխու-թիւններ որք լեզուին զարգացումն կը նը-շանակեն, և ի բաց վռնտել ինչ որ յետա-դէմ հրջափոխութեան և իրական անկման արդիւնք է։

Հայերէն լեզուն(որպէս կ՛ասէինք նա-խորդ թուով) հայ ազգին հետ ինկած՝ և Հայաստանի պէս աւերակ դարձած էր. զայն վերաշինել ձեռնարկեցին հայ գրա-գէտք ԺԹ դարուս, և բաւական յաջողե-ցան։ Սակայն դեռ աւարտած չէ շինուա-ծըն, տակաւին շատ բան կայ ուղղելի, շատ բան կայ լեցունելու։ Պէտք է շարու-նակել վերաշինել հայ լեզուն հայկական ճարտարապետութեամբ, այն է բուն հա-յերէն լեզուի ոգւոյն համաձայն։ Արդի հայերէնի մէջ յարգելով հանդերձ ինչ փո-փոխութիւն որ հայ լեզուի ոգւոյն համա-ձայնութեամբ գործուած է, պէտք է մեր-ժեմք ինչ որ իրական աղաւաղում է ընդ-դէմ այդ ոգւոյ։

Իրական աղաւաղմանց կարգէն է Ը տառին յաճախումն և օտար ձայնն մեր արդի հայերէնին մէջ։

Ցիրաւի այս նկատմամբ ուղղութիւնք գործուած են արդէն. չեմք ասեր ռամկօ-րէն Հըմար, Հըմա, Սըպէս, Աշխըրքիս, Թը այլ ուղղած և սովորած եմք գրել ու հն-չել Համար, Հիմա, Սապէս, Աշխարհիս, Թէ։ Այդ կարգի ուղղելիներ կը միան սա-կայն տակաւին, և գրեթէ ոչ ոք կը հա-մարձակի անոնց դպչիլ։

Ուղիղ հայերէնի Ա, Ե, Ի, Ու, Է ձայ-նաւորներուն տեղ բռնելու կը միտի Ը տա-ռն ռամկօրէնի մէջ։ Եւ ո՞վ է ինքն իսկ Ը որ այդքան կը բազմանայ, կը տարած-ուի և ճշմարիտ ձայնաւորներն իրենց տե-ղէն հանելով ինքն կը մտնէ փոխանակ.— այդ Ը—ն բռնաւոր օտար մ՛է։

Զրպարտութիւն չէ այս· պիտի հաստատեմք փաստերով թէ մեր Ը տառն զոր Ըլլայ, մը, Ընել, Ըսել և այլ բառերուն մէջ կը գործածեմք, բնաւ հայ տառ չէ, հայ լեզուի ձայն չէ, օտար է, և պէտք է արտաքսուի։

Աւասիկ մեր առաջին փաստն·—

Հայերէն Ը տառին անունն ըթ չէ, այլ եթ։

Դիտելի է թէ մեր միւս ձայնաւորներուն անուններն կը պարունակեն ձայնաւորին բուն ձայնն·— այբ, ինի, եչ, է, ևն։ Նաև ամեն բաղաձայն տառի անունն կը սկսի տառին ձայնովն — թո, խէ, ծա, տիւն ևն։ Եթէ մեր նախնիք Ը գիրն կը հնչէին որպէս մեք կը հնչեմք զայն, ինչո՞ւ անոր անունն չդրին ըթ այլ եթ։

Ուրեմն մեր Ը ձայնն նոցա օտար էր· մեք սխալ կը հնչեմք Ը տառն։ Այս տառին ձայնն ե՝ի չատ մօտ է։ Մեր Ը ձայնն հայերէն ձայն չէ, օտարամուտ տառ և ձայն է, և հայ բառերուն մէջ մտնելով կ՝աղաւաղէ զայնս։

Մեր երկրորդ փաստն այն է որ Ը տառով հայերէն բառ չկայ։

Մեր նախնիք Ը տառով հայերէն արմատ բառ չէին ճանաչեր, միայն ի և ու ձայնաւոր պարունակող արմատներուն ածանցմանց և բարդութեանց (հոլովմանց և խոնարհմանց) մէջ Ը տառն կը դնէին փոխանակ ի և ու՝ի, այդ տառերու հընչումն սղելու կամ արագցունելու համար։ Այս երևութի քերականային անունն է փոփոխումն և սղումն·— փոփոխումն երբ Ը տառն կը գրուի ի կամ ու՝ի տեղ, ինչպէս ինչ՝ընչեղ, իղձ՝ըղձալ, ումպ՝ըմպել, ունդ՝ընդեղէն·—սղումն երբ Ը չգրուիր, ինչպէս գիր՝գրեմ, միտք՝մտաց, մուր՝մրել սուր՝սրոյ։ Սղումն է ուրեմն աւելի մեծ արագութեան նշանակիչ քան զփոփոխումն։ Արժան է դիտել թէ փոփոխումն կը լինի եթէ ու կամ ի ձայնաւորն բառին սկիզբն է, ամփոփումն կամ սղումն եթէ իրմէ առաջ կամ յետոյ բաղաձայն ունի՝ միևնոյն վանկն կազմող։

Ո՛ր բնիկ հայերէն բառի մէջ որ Ը տառն կայ, երբէք նախնական, արմատական ը չէ, այլ միշտ և առանց բացառութեան՝ փոփոխումն է ի կամ Ու ձայնաւորաց։ Այլապէս ասելով՝ ամեն բառ որ Ը տառն կը պարունակէ անշուշտ ածանցեալ կամ բարդեալ է։

Նոյն իսկ երկու նախդիրներն ԸՆԴ և ԸՍՏ, չունին Ը տառն նախնապէս, այլ միայն փոփոխմամբ· դոցա նախնական ձևն է ինդ և իստ (նուազ հաւանօրէն ունդ և ուստ)։ Անհնար գտնել և ցուցնել այդ նախդրոց բուն ձայնաւորն՝ անփոփոխ վիճակին մէջ, քանզի յորմէ հետէ նոքա նախդիր եղած են, այնու իսկ զի նախդիր են, ի հարկէ միշտ փոփոխման երևութին տակ գտնուած են, և ոչ ոք կրցած է տեսնել զիրենք բնիկ կերպարանի ներքեւ։ Նախդիր մի միշտ և անպատճառ խնդիր մի կ՝ունենայ, այսինքն ուրիշ բառի մի կ՝ընկերանայ, կը կցուի, և անոր հետ մէկ բառ կը յօրինէ, ճիշդ որպէս թէ ածանցում մի կազմէր անոր հետ, և ուստի կը կրէ այն փոփոխումն զոր ածանցման օրէնքն կը պահանջէ·— ինդ՝ն կը լինի ընդքեզ, և իստ՝ն ըստիս։ Թէպէտ յստակութեան համար այդ նախդիրք, եւրոպացւոց օրինակին հետեւելով, կը գրուին հայերէնին մէջ խնդրոյն անկից, բայց ճիշդ գրութեամբ կցուած պէտք է լինէին, ինչպէս որ արտասանութեան մէջ իբրեւ կցեալ, ածանցեալ մէկ բառ կ՝արտասանուին, որպէս զ, ի, յ, ց, նախդիրներն։

Առնունք այժմ բառարանն ի ձեռն, և ը գրով սկսող բառերն քննենք—ամենն ալ փոփոխմամբ ունին ը-ն։ Ունչք՝էն է ընչացք· ումպ՝էն է ըմպան։

Ը-ով սկսող բառերուն աւելի մեծ մասնընդ և ըստ նախդրով ածանցեալ են, այսինքն դարձեալ փոփոխմամբ ունին ը-ն· ինչպէս ընդ՝ունիլ, ընդ՝արմանալ, ընդ՝էր, ընդ՝վզել, ըստանձնել ևն։

Ինդ նախդիրն ոչ միայն փոփոխմամբ ընդ ձեւն առած կը կցի, այլ և աւելի կարճացած և անուշութեան համար Ըն և Ըմ ձեւն առած է· ինչպէս ըն՝կղմիլ ըն՝կլուզանել, ըն՝կճիլ (ընդգճիլ), ըն՝տանի, ըմ՝բոն, ըմ՝բերանել, ըն՝ձեռել, ըն՝ծայել։ Ընթանալ բառն ալ, որպէս հաստատած է Հ· Ս· Տէրվիշեան (Հնտեւրոպական Նախալեզու, երես 45), ըն՝թանալ է, բառին արմատն լինելով թա։

Կը մնան տակաւին ը տառով սկսող մի քանի բառեր, որոց ստուգաբանութիւնը ոչ մի բառարան, ոչ մի հեղինակ փորձած է ցարդ, որքան գիտեմք·— ընկեր, ընտիր, ընտել, ընթեր, ըմբիշ·—այդ բառերու ստուգաբանութիւնն ունիմք

տալ աստ իբրեւ արդիւնք մեր անձնական քննութեան, և ցուցնել թէ ամենն ալ ընդ կամ ըն նախդրիւ ածանցեալ են։

ԸՆԿԵՐ— կը նշանակէ ի միասին չինող, կերտող, գործող։ Կեր՝ն ոչ ուտեմ այլ կերտեմ բային կարճ արմատն է հոս, ըն՝կեր կը նշանակէ գործակից։

ԸՆԹԵՐ— թեր, կողմ, քով կը նշանակէ, ինչպէս յայտնի է, յորմէ ըն՝թեր, քովիկն։

ԸՆՏԻՐ կամ ԸՆԴԻՐ— վերջին ուղղագրութիւն է ճշգրիտ, բառին արմատն լինելով դիր (յորմէ դնեմ բայն)։ ընտրելու գործողութիւնն իրարու խառնուած կամ մէկտեղ գտնուող աղնիւ և ստորին, պիտանի և խոտան բաներն իրարմէ որոշելով՝զխոտանն ընկենուլ և աղնիւն մէկդի, մէկ կողմ, մէկտեղ դնել կ'ենթադրէ, այսինքն ընդ՝դրել կամ ըն՝դրել։

Հայկազեան բառգրոց մէջ անհամար բառեր քաջ ստուգաբանուած են, բայց երբեմն ալ ուր ստուգաբանութիւնն տալ կարելի չէ եղած, նմանաձայն բացատրութիւն մի յերիւրած են իբր ենթադրական ստուգաբանութիւն. այսպէս «ընտիր»բառին առջև կը գտնեմք «լաւ և պատուական՝ համեմատութեամբ իրի ընդ իրի։» Ընտել բառին առջեւ ալ նմանօրինակ խաղ մի խաղցուած է.— «ընդ այլում (անձին կամ իրի) վարժ, սովոր» ասելով։ Սակայն ոչ «իր» բառն ընտիրին մէջ ոչ «այլ»բառն ընտելին մէջ մաս ունին։

ԸՆՏԵԼ ածանց է ընդ նախդրի և «ել» արմատոյ ելանեմ բայի։ Ելանել բառն միշտ տնէն կամ ներսէն դուրս կամ վարէն վեր ելնել չինշանակեր, այլ և հողէն, ծոցէն, աղբիւրէն ելնել, ծագիլ, բուսնիլ, ծնանիլ.— գետ ելանէր յեդեմայ.— ելցէ ծաղիկ յարմատոյ անտի.— թագաւորք յերանաց քոց ելցեն։— Ուրեմն ընտել կը նշանակէ ընդ՝ել, ի միասին ելած, ծնած, բուսած մեծցած, ընտանի։ Ընտել բային հոմանիշ են և համանման կազմութիւն ունին ընդածին և ընդաբոյս բառերն ալ, նոյնպէս ընդ նախդրիւ ածանցեալ։

ԸՄԲԻՇ— յայտնի ունի ըն նախդիրն որոյ բնականօրէն նուն մենի փոխուած է բենէն առաջ հանդիպելով։ Ըմբիշ նա է որ ուրիշի մի հետ կը մրցի մարմնով. ուրեմն ըմ կամ ընդ նախդիրն լաւ կեցած է բառին մէջ, իսկ «բիշ» արմատն կը յիշեցունէ յունարէն բիքս (բռնցի) և ուրիշ լեզուաց պօքս բառն, որ անգլիերէնի մէջ կը գործածուի «բռնցամարտիմ» նշանակութեամբ։

Կը մնան ԸՆԹԵՌՆՈՒԼ և ԸՆԿՈՅԶ բառերն։ Ընկոյզ բառն վրացերէն «նիկօզի» կը հնչուի, և լատիներէն նուքս։ Հայերէնի մէջ ևս ի սկզբան թերեւս ինկոյզ կը հնչուէր, ինչպէս ցարդ ի գաւառս ինչ։ Նաև զարմանալի չէ եթէ ին՝ով սկսող բառ մի չուտով սկսէր ըն հնչուիլ ըն նախդրիւ ածանցուած բառերուն նման։ Իսկ ընթեռնուլ բառին համար կարելի է բաւական վստահ լինիլ թէ ըն՝թեռնուլ է, թեր արմատի մի ածանցեալն ըն նախդրիւ, բայց թէ այդ թեր արմատն միւս թեր (կողմ, քով) բառէն զա՞տ է և ո՞ր հնտեւորոպական արմատին կը պատասխանէ, կր մնայ դանել։

Այս քննութենէ կ'եզրակացնենք թէ—

(Ա.) Հայերէն լեզուին մէջ ը ձայնաւորով արմատական բառ բնաւ չկայ։

(Բ) Ը տառն ի և ու ձայնաւորներուն արագացեալ հնչումն նշանակելու կը ծառայէ և իբրեւ անոնց փոխանորդն կը տեսնուի ո՛ւր ուրեք որ կը տեսնուի։

(Գ) Մեր նախնիք Ը տառն չէին հընչեր որպէս մեք զայն կը հնչեմք այսօր Ը,լլալ, Կը, և այլ աղաւաղեալ բառերու մէջ։ Ը տառին բնիկ և ուղիղ ձայնն կարի մերձաւոր է ե ձայնաւորին հնչման, որպէս ը-ի «եթ» անունն իսկ կը վկայէ։

(Դ) արդի հայերէն լեզուի բառերուն մէջ ևս ը տառն պէտք է մտնէ, և մտնէ միայն ո՛ւր որ ի և ու ձայնաւորաց կրնայ փոխանորդել ըստ օրինաց փոփոխման։

Այս հիմանց համաձայն պարտին ուղղուիլ ինչ ինչ բառեր որք աղաւաղեալ ձեւով դեռ կը գործածուին մեր արդի գրական լեզուին մէջ։

Ը յօդն և ցուցականն պէտք է ի սպառ արտաքսել։ Մարդը, գետը, կաթը՝ գրել և հնչել, մեղանչել է հայ լեզուին ոգւոյն դէմ, օտար ձայն և ոճ մուծանել է մեր լեզուի մէջ։ Ը ձայնն այդ պարագայից մէջ չպիտի կրնար ի և ու ի տեղ դրուիլ, զի բառին ծայրն է. ո՞րքան աւելի դատապարտելի է այնու զի Ն-ի տեղն կը բռնէ։ Գրե՛մք և հնչեմք ուրեմն«մարդն», «գետն», «մեծն» միավանկ, ն յօդն իւր նախնթաց բաղաձայնին հետ սերտիւ միացած և իբրեւ մէկ գիր եղած. այդպէս աւելի ոյժ և կորով կ'առնու առսգանու-

թիւնն։ Հնչեմք և մե՛ք, որ յառաջադէմ դարուց զաւակներ կը համարիմք մեք զմեզ, մեր հարց կորովի և քաջ արտասանութեամբ, և ոչ պառաւական դանդաղութեամբ և զառամելոյ երկարաձիգ թուլութեամբ՝ մէկ վանկն երկուքի, երկու վանկն երեքի, նուն ը-ի վերածելով։ Գրեմք և հնչեմք «գութն», «գորգն», միավանկ, միշտ միավանկ, մինչև իսկ ուր որ ձայնաւորով սկսող բառ մի չի դար ետեւէն։

Ը տառն ինչ ինչ բառերու մէջ Ե և Ա ձայնաւորներուն տեղ մտած է, ինչ որ կրկնակի հակառակ է մեր լեզուի օրինաց։ Ե և Ա ձայնաւորք ածանցման առթիւ փոփոխութիւն և սղում չեն կրեր որպէս Ի, Է և ՈՒ ձայնաւորք կը կրեն։ Ծեր, ծերոյ, մեր—մերոյ· սեր—սերել· եթէ միանգամ այդ կանոնի դէմ գործել սկսուի, կրնայ բոլոր լեզուն չփոթիլ ու խառնակիլ· զի սեր-էն սրել պիտի ունենայինք ինչպէս սուր-էն սրել, են ևն։ Արդ, աշխարհաբարի կամ մանաւանդ ռամկօրէնի այդ ապօրէն միտման դէմ պարտի դնել գրագէտն, և ամեն ուր որ Ե և Ա ձայնաւորաց տեղ ռամիկը ը դրած է, զայնս ուղղել, և ասել

ԼԻՆԻԼ—(ոչ ըլլալ, որ եղանիմ-ի աղաւաղեալն է)· ԲԱՂԱԲԻՆ (ոչ քաղքին)· ԲԱՂԱԲԱՑԻ (ոչ քաղքացի)· ՎԵՐԱՑ (ոչ վըրա կամ վրայ)· ԱՍԵԼ (ոչ ըսել·) ԱՆԵԼ (ոչ ընել), ՄԻ (ոչ մը)։ ՉԻ (ոչ չը), չեմ սիրեր, չես սիրեր, ՉԻ՛ սիրեր, ՉԻ՛ տեսներ։ Այս չի՛ բացասականն արդի հայերէնին յատուկ է, աւելի երկար բացատրութեան մի ամփոփեալն լինելով·— չեմ ի գալ, չես ի գալ, չէ՛ ի գալ (I am not coming, he is not coming ի ճիշդ հայերէնն) է բուն նախնական ձեւն։ Իսկ կատարեալին և այլ ժամանակաց ու եղանակաց մէջ չ մակբայն լոկ և պարզ պէտք է գրուի·— չսիրեցի, չսիրեցիր, չսիրե՛մ, չգա՛ք, եթէ չսիրէիր. չսիրած են։

Կը մնայ բայական ԿԸ մասնիկն, կը սիրեմ, կը սիրէի։ Այդ սոսկալի աղաւաղումն աղաւաղմանց կը մնայ և կը ոպառնայ մնալ արդի հայերէնի մէջ։ Գայթակղութեան խճով կը լեցուէ այդ ԿԸ-ն մեր գրական լեզուն, և բաղում վիճաբանութեան առարկայ եղած է։ Հ. Ղ. Ալիշան իւր աշխարհաբար երկոց մէջ ԿՈՒ գործածած է և ոչ ԿԸ։ Ամեն հայկաբան արդար գրեթէ բնազդական նողկանք մի կը զգայ այդ կը-ի դէմ· Ոմանք ուզած են բոլորովինվերցուցնել զայն ի միջոյ· բայց այդ անհնար է, զի յայնժամ աշխարհաբարի խոնարհումն գլխովին յեղաշրջել հարկ կը լինի, հիմնական անհնարին փոփոխութիւններ պէտք կը լինին։ Հ. Արսէն Այտընեան— որ գրաբարի ու աշխարհաբարի առնչութեանց խնդրոյն վերայ մեծագոյն հեղինակութիւնն է և ճշմարիտ գիտնոյ մի ճշդասիրութեամբն ու իմաստասիրի լայնատարած հայեցողութեամբ ու սուսնասիրած է հայ լեզուն,— ցուցած է նաև թէ «կայ ու» է այն նախնական բացատրութիւնն որ տակաւ «կու»ի «կի»ի և «կը»ի փոխուած է։ Եւ կը բողոքէ այդ մասնիկն աւելի պզտիկցուցնելով կ գրելու միտման դէմ։ Սակայն եթէ արժան է մասնիկ մի չափազանց պզտիկցուցնելու դէմ բողոքել, աւելի արժան է այդ կը-ի Ը տառին դէմ բողոքել։ Մեք կարծեմք թէ երկու բանին մին հարկ է ընտրել, կա՛մ կը-ն կու-ի (կամ կի-ի) փոխել, կա՛մ ը տառն յապաւելով միշտ լոկ կ գրել և բային առաջին վանկին խառնել բոլորովին մէկ վանկ անելով անոր հետ։

Զայս կ՛ասեմք նկատելով թէ ժողովրդին բնազդումն է ու և ի ձայնաւորներն փոփոխման օրինաց ը-ի վերածել, և ըսել կըսիրեմ փոխանակ կու սիրեմ կամ կիսիրեմ ըսելու։ Ժողովուրդն զմասնիկն կից, իբրեւ ածանցման մասնիկ կ՛ըմբռնէ, և ածանցման օրէնքի կ՛ենթարկէ զայն, ենթարկած է զայն։ Եւ ժողովուրդն իրաւունք պիտի ունենար եթէ արդէն նոյն մասնիկն փոփոխութիւն կրած չլինէր, «կայ ու»էն կու կամ կի-ի ափոփուելով։ Եթէ միանգամ սղեալ կամ փոփոխեալներն դարձեալ սղեմք կամ փոփոխեմք, կը խանգարեմք լեզուն· ոչ—սիրեմ ասելէ յետոյ, եթէ ասէինք սրեմ, իբր թէ ի տառն արդէն է-ի փոփոխեալն չլինէր, ի հարկէ պիտի մեղանչէինք։ Ժողովուրդն յանգէտս կրնայ անել այդ պիսի փոփոխում չճանաչելով բառին առջի վիճակն կամ արմատն· գրագիտին անկ է ուղղել այդպիսի սխալներ։

Ռամիկն յանգէտս ուրիշ սղեալ մասնիկ մ՛ալ ունի որդ անգամ սղելու սխալն գործած է, զոր պարտ է մեզ մերժել։ Հին հայերէնի անցողական չինող«ուցանեմ» մասնիկն երկու անգամ կտրատեր է։ Ու-

ցանեմի ուց՝ը ոյց՝ի փոփոխեալն է ըստ կանոնի, (նստոյց, նստուցանեմ։) Յետոյ բռներ այդ ուց՝ին ալ«ու»ձայնաւորն դուրս ձգած են կամ ը՝ի փոխած, որ ապօրէն է։

Նստըցընեմ կը հնչէ այժմ ժողովուրդն, կերցընեմ, անցնեմ, ևն։ Պէտք է անցողականներն ու՝ով գրել և հնչել— անցունեմ, կերցունեմ, խօսեցունեմ. կատարեալ երրորդ դէմքն գրել խօսեցոյց, յիշեցոյց ևն։ Այս առթիւ յիշեցուենք թէ ժողովուրդն ցուցնել բային ուցնել վերջաւորութենէն խաբուելով իբրեւ անցողականի մասնական հետ վարուեր է անոր հետ և ցուցուցի, ցուցուցիր, ևն խոնարհած է. պէտք է հնչել և գրել կը ցուցնեմ, կը ցուցնէի, ցուցի, ցուցիր, եցոյց, ևն։ Նաև չգրել երբէք ռամկաբար—հարցունել, հարցուցի, հարցուց, իբրեւ թէ անցողական լինէր. այլ միշտ գրել կը հարցնեմ, հարցայ, հարցար, հարցաւ, հարցանք, հարցաք, հարցան, ևն։

Մեք կը մասնկան ը տառն առ այժմ կը պահեմք, այն յուսով որ յետոյ իցէ թէ կու-ի փոխուի։ Այդ միակ և առժամեայ բացառութենէն դատ ը տառն կ՝ընդունիմք արդի հայերէնի մէջ միայն ո՛ւր որ գրաբարն կ՝ընդունի, այսինքն ուր որ համաձայն է հայ լեզուի ոգւոյն և բնիկ կազմութեան։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼԻՍԷՆ

Կ. Պոլիս 12 Յունիս, 1893

Պրուսայի նահանգին Ուշագ քաղաքին մէջ քստմնելի դէպք մի պատահած է, զոր կ՝ուզեմ պատմել նախ համառօտիւ, յոյժ վստահելի թղթակցութենէ մի առնելով։

Ուշագ Թրքաբնակ քաղաք մէ, որ իբր 3000 մահմետականաց քով հազիւ 200 տուն Յոյն և 80 տուն Հայ կայ։ Քաղաքին խաներէն միոյն մէջ դերձակութեամբ կը շրջէր հայ երիտասարդ մի։ Թուրք մի ձեռք մի հանդերձ յանձնարարած ըլլալով այդ երիտասարդին, իւր փոքր աղջիկ կուղարկէ անոր սենեակն հանդերձին համար։ Աղջիկն տուն կը դառնայ և լալով կը պատմէ իւր ծնողաց թէ երիտասարդն զինքն բռնաբարեց։ Ազգկան հայրն խոկոյն կ՝երթայ և կը սկսի մեղցունելու դիտաւորութեամբ ծեծել երիտասարդն։ Ոստիկանք կը հասնին և զերիտասարդն ձերբակալելով կը տանին։ Այս ատեններն մահմետականք շատ կը գրգռին քրիստոնէից դէմ և ջարդելու սպառնալիքներ կ՝ընեն։ Բժիշկք աղջիկն քննելով կը հաստատեն աղջկան խօսքն, և երիտասարդն ալ կը խոստովանի իւր յանցանք։ Բանտարկուելէն քանի մ՝օր վերջ բանտէն կը հանեն երիտասարդն և մեծ ու կատաղի ամբոխով կը տանին խանն։ Հոն ամբոխն հետ զհետէ կը ստուարանայ։ կը տանին երիտասարդն իւր սենեակ, և դաշունի հարուածներով կը սպաննեն զայն խայտառակ կերպով։ Ապա մարմինն երեքյարկ բարձրութենէ վար կը նետեն. վարն գտնուողներն սէվապ համարելով իրենց դաշոյններն կը մխեն դիակին մէջ, և ոմն բահի հարուածով կը ջախջախէ գլուխն և դուրս կը թափէ ուղեղն։ Յետոյ աղբի սայլի մի մէջ դնելով կը շրջեցունեն քըրիստոնէից թաղերուն մէջ, և վերջապէս կը նետեն զայն մ՝օրն դրան առջեւ և քարակոյտ մի կը դիզեն անոր վրայ։ Քաղաքին կառավարիչն ժամանակին հրաման կը յղէ թաղել մարմինն, բայց քահանան ինքն ալ սպառնալիքներ լսած ըլլալով չի համարձակիր տունէն դուրս ելնել։ Վերջապէս քանի մ՝ գնչուներ կը տանին կը թաղեն մարմինն։ Այս դէպքին պատճառաւ քրիստոնէից մէջ տիրող ահն ու սարսափ նկարագրել հարկ չէ.

Կրնայ ըլլալ որ երիտասարդն իրօք գործած ըլլայ իրեն վերագրեալ յանցանքն, բայց երբէք չէինք գիտեր որ Թուրքերն այդքան մեծ ոճիր համարէին այն բանն որ իրենք այնքան յաճախ կը գործեն իրարու դէմ և քրստոնէից դէմ— և մինչև անգամ տղոց դէմ։ Իրենց այդ կատաղութիւն կը ցուցնէ թէ ո՞րքան կատաղելու իրաւունք ունէին ուրեմն քրիստոնեայք իրենց պատիւ բռնաբարող պղծասէր Թրքաց դէմ։

Սահմանագրութեան տարեդարձին օրն նորէն անցուցինք, այս անգամ տօնելու փորձ կամ խօսք ալ չընելով։ «Թէրճիմանը Հագիգաթ» սա կերպով ծանոյց տարեդարձն.— «Յառաջիկայ կիրակի օր, հայ ազգին չնորհեալ կայս. Փէբրմանի 32դ տարեդարձն ըլլալով, Տէ՛ր Խորէն

Պատրիարք Հայրն կրօնական արարողութիւններ պիտի կատարէ և բարեմաղթութիւններ պիտի ընէ վեհ. Սուլթանին կենացն համար։»

«Հագըգաթ» իրաւ հագիգաթն ըսած է «շնորհեալ կայսերական ֆէրմանին տարեդարձն է» ըսելով. քանզի յիրաւի շընորհուածն ֆէրման է, այսինքն թուղթ, և ոչ ուրիշ բան։

Ես ալ կ'ըսեմ թէ այդ թղթին ոչ թէ տրուելուն, այլ մահուան տարեդարձն է որ կը տօնէ երկու երեք տարիէ ի վեր մեր կենդանույն մեռեալ Սրբազան Պատրիարք Հայրն։

ԱՆԱՆՈՒՆ

ՎԱԽՃԱՆ «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ»

Մարսիլիոյ «Արմինա» հայերէն լրագիրն իւր 81դ թուով պաշտօնական յայտարարութիւն մի կը հրատարակէ ծանուցանող թէ Հ. Հ. Միութեան վախճան տըրուած է։

Բաղձալի էր որ «Արմէնիայի» մեծայարգ խմբագիրն, որ Միութեան հիմնադիրն ու ընդհանուր տնօրէնն էր միանգամայն, շնորհքով ուսումնասիրութիւն մի խմբագրէր և պարզէր թէ ինչ փորձառութեան իմաստնարար դասեր ընդունած է այդ վիժեալ ձեռնարկէ։

Բաւական չէ հասկցունել թէ Միութեան իրօք անդամակցողաց թիւն անբաւական եղած լինելով՝ չորս տարուան դժուարին գոյութիւն մ'ունեցած է և գրեթէ ոչ ինչ արդիւնք։

Շատ շահեկան է գիտնալ թէ ի՞նչ պատճառներով այդ մեծանուն Միութիւն չկարաց մեծնալ և մեռաւ իմատաղ հասակի։

... Այդպիսի կազմակերպութեանց ձեռնարկող գործիչն պարտի մարդ ճանաչելու արուեստին քաջ հմուտ լինիլ՝ զանազանելու համար անկեղծն կեղծաւորէն և անսկզբունք ու անբարոյական տենդոտն իմաստուն և լուրջ աշխատողէն։

Առաջնորդի մեծ փորձութիւնն է յոյժ ազգասէր և անձնուէր կարծել զա'յնս ի հետեւողաց որք զինքն շարունակ կը շողոքորթեն և այնպայման կը ներբողեն, իսկ զա'յնս, որք զովեստի հետ խրատ և սքանչանաց հետ քննադատութիւն կը խառնեն, համարիլ կասկածելի և վերջապէս անհաւատարիմ և մատնիչ։

Ո'վ որ ինքզինք մեծ գործիչ կը համարի, պարտի քննադատութեանց ոգւոյն թափանցել և բնաւորութիւններն ճանաչել ի խորոց, ոչ թէ ասոր անոր սուտ և թշնամական ասութեանց վերայ չափել համարմունք և կարգադրել իւր վարմունք։ Առաջնորդ մի իրեն աջակցողաց անիրաւ պահանջներուն տեղի տալով անդէպ յարձակումներ չպարտի անել երբէք ոև է մէկուն դէմ։

Հ. Հ. Միութիւնն չկործանեցաւ արտաքին թշնամեաց հարուածոց ներքև, զայն կործանողներն եղան անոր անմիտ գործիչներէն ոմանք, ստայօղ պաշտօնեայք և անսկզբունք պաշտպանք։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

Մեծ. խմբագիր ՀԱՅՔ պատուական և յոյժ սիրելի Հանդիսի։

Մեր Ամերիկեան հայ պանդխտոց վիճակին վրայ գրեթէ ամեն թուոյ մէջ կարեւոր յօդուած մը կ'ունենաք, որուն համար շատ ուրախ եմ և շատերուն գոհունակութիւնն կը լսեմ։ Կը յուսամ թէ լոկ գոհութիւն յայտնել բաւական չպիտի համարին մեր գործաւոր եղբայրներ, և այդպիսի բազմօգուտ թերթի մը առ հասարակ բաժանորդ պիտի գրուին։

Իմ ըսելիքս ամուսնութեան խնդրոյն վրայով է։ Երկու դիտողութիւն ունիմ ընելու։

Ձեր պատ. թղթակիցներէն մին ըսած է թէ վստահելի միջնորդներու ձեռքով լուսանկար փոխանակելով և տեղեկութիւն ստանալով, կրնան երիտասարդք ոմանք ի Թուրքիոյ աղջիկ բերել, կէս-նըշանուած, և եթէ յետ անձամբ զիրար ճանաչելու՝ իրարու հաւնին, կրնան ամուսնանալ, եթէ ոչ՝ ամեն մէկը իրեն յարմարը կը փնտռէ։

Այդ կերպին նկատմամբ սա դիտողութիւնն պիտի ընեմ թէ աւելի յաճախ

ձախող քան յաջող հետևանաց կը յանգի։ Ի տեսականին շատ պարզ բան մը կ'երևնայ, բայց ի գործնականին շատ կնճռուտ և շատ դժուար է։ Շատ խաղեր կրնան խաղցուիլ աղջկան կողմէն, կամ մանաւանդ անոր մեծերուն կողմէն։ Աղջկան գալէն ետև եթէ ամուսնութիւնն չյաջողի ուզող տղուն հետ, շատ ծանր բան մը կը սեպուի. թէպէտ ազնիկն եղած լինի չհաւնողն, դարձեալ պիտի զրուցուի թէ տղան չէ հաւներ. և զի՞ չէ հաւներ.— վասն զի այսպէս է եղեր, վասն զի այնպէս է եղեր ևն։ Ոչ թէ տղուն դրամը կորսուած կը լինի և աղջիկն ջամբորդած կ'ըլլայ, այլ և սիրտք երկուց կողմանց կը վիրաւորին, և գժտութեան սերմեր կը սերմանուին երկուց կողմանց ծանօթներու մէջ։

Ուրիշ բան մ'ալ կայ լուրջ նկատողութեան առնլու։ Թուրքիայէն եկող աղջիկ մը, մինչև իսկ դպրոց գնացած և ուսում առած ալ լինի, այս երկրին համար անկիրթ կը սեպուի.— այս երկրին համար կ'ըսեմ, ոչ թէ իւր էրկան։— Տղան ու աղջիկը նախ իրարու կը հաւնին սեպենք, կ'ամուսնանան. սակայն այս երկրին մէջ մէկ կամ մէկ քանի տարի ապրելէն վերջ՝ իրարու կը սկսին տարբեր երևնալ։ Աղջկան աչքը կը բացուի— պիտի ըսէի կընկան—այսերկրին ազատութիւններն կը ճանաչէ, կերպերուն կը վարժուի, կանանց արտօնութիւններն կը տեսնէ, և կը սկսի տարբեր տեսնչեր և խորհուրդներ յղանալ։ Արեւելեան հնազադութեան ոգին տակաւ կը կորուսանէ, էրկանը հաւասար կը ըզգայ ինքզինք, և փափուկ ուշադրութիւն և մշտարթուն նկատողութիւն կը պահանջէ անոր կողմէն, բան մը զոր էրիկն ալ իբրեւ արեւելցի ընելու կարող չէ։ Կինն այսպէս արեւելցիի ինչ ինչ պարզ և խոնարհ հանգամանքն կը կորուսանէ և Ամերիկացիի կարգ մը հակամիտութիւններն կը զարգացունէ յանձին. ալ ո՛չ լման արեւելցի է և ո՛չ լման ամերիկացի, այլ անբնական և խառնորդ արարած մը, անտանելի, անմարսելի։ Ամերիկուհին այո, շատ ազատութիւններ կը վայելէ ու շատ պատիւ, սակայն անոր համեմատ ալ կըրթուած է. անձնավարութիւն (to behave herself) ըսուած պատուական և անգին արհեստն սովրած է ի մանկութենէ, ինչ որ դպրոցի կրթութիւնն չի կրնար տա մեր աղջկանց։ Ուրեմն, կ'ըսեմ, կանխաւ խօսք ընելով, պատկեր տեսնելով և այլ եղանակաւ յատուկ աղջիկ բերել Թուրքիայէն յանձնարարելի չէ։ Տաճկաստանի մէջ կրթուած աղջկանց հարիւրին մէկը հազիւ կրնայ այս երկրին մէջ կին կամ տիկին լինելու յարմարիլ։ Մեր երիտասարդք երբ ամուսնանալու կարող լինին, թող երթան հայրենիք և հոն կարգուին ու հոն մնան։

* * *

Քաղաքական Ազգային

ԵՒ

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հետեւեալ կարեւոր հեռագրերն Հայ բանտարկելոց դատավարութեան և դատապարտութեան նկատմամբ հրատարակուեցան Եւրոպայի և Ամերիկայի լրագրոց մէջ։—

Կ. Պոլիս, 18 Յունիս.— Ահա վերջացեր է Էնկիւրիի այն Հայերու դատն որք Կեսարիոյ և Մարսուանի ծանօթ յուզմանց մասնակցած լինելու ամբաստանութեան տակ էին։ Բանտարկելոց 17ն, ի համարի որոց են Փրոֆ. Թումաեան և Փրոֆ. Գայայեան, դատապարտեալ են ի մահ. 6ն, որոց մէջ է Կէմէրէկի բողոքական երէցն. տասնեհինգամեայ բանտարկութեան, 18ն եօթէն մինչև տասն տարի բանտարկութեան դատավճռեցան, և 15 հոգի ալ արձակուեցան։ «Տէյլի Նիւզն», Էնկիւրիի դատաստանին արդեանց վերայ խօսելով կ'ասէ թէ «Շատ երկիւղ չկայ որ մահուան վճիռն իգործ դրուի։ Հայերն կրնան գոհութեամբ դառնալ նայիլ այդ դատաստանի, որովհետեւ հարստահարութիւնք բովանդակ աշխարհի ուշն գրաւած են այն տառապանաց վերայ որոց երկար ժուժած են առանց ոևէ արդարութիւն ձեռք բերած լինելու։»

Լոնտոն, 19 Յունիս.— Սըր Էտ. Կրէյ, Արտաքին գործոց Խորհրդարանական քարտուղար, Ստորին Խորհրդարանին մէջ այսօր ասաց, պատասխանելով հարցմանց

ինչ․, թէ մահուան վճիռներն վերաքննութեան ենթակայ են։

Լոնտոն, Յունիս 22․— Հայ քրիստոնէից բարեկամք ժողով մ'արին այսօր քաղաքիս մէջ և ատենախօսութեամբք դատապարտեցին այն թուրք պաշտօնէից ընթացք որք 17 Հայերու մահուան վճիռ տուած են։

Ժողովոյն մէջ կարդացուեցաւ ամերիկեան գոլէճին նախագահ Տր․ Հէրիքի մէկ նամակն, որով կը ժխտէր այն զրոյցն իբր թէ դատապարտեալ ուսուցչապետներն պաշտօնանկ եղած լինէին։ Արդարեւ Կ․ պոլսոյ ամերիկեան դեսպանատան նախկին քարտուղար Նիուպէրրին խնդրած էր գոլէճի տնօրինութենէն կախակայել դատապարտեալներն, սակայն իւր խնդիր մերժուած էր։

***

Մէքքէյի մէջ հնտախտէ մեռեր են օրն մինչև 450 հոգի։

***

Խարբերդու Հողէ գիւղէն կը գրեն Մայիս 5 թւով․

Այսօր կէս օրէն ետքը, վեց ամսուան նոր հարս մը մի քանի տաճիկներ կը բռնեն անխոստովաննլի նպատակաւ, այն պահուն երբ նա գիւղէն 5 րոպէ հեռաւորութեամբ այգին սրբանելու(°) կերթար։ Հարսին յամառած դիմադրութենէն կատղած՝ Տաճիկներն դանակի հարուածներով կը յօշոտեն հէքին այլ և այլ անդամներն։ Խեղճ կինը մեռաւ։

***

Խարբերխու Կարմրի գիւղէն հաղորդուած է հետևեալն,

Կարմրեցի հայ պատանի մը արօր վարելու ատեն մի քանի Թրքեր, մօտակայ արտէն, կը բռնեն զինքն և արօրին կը լծեն․ երբ չի կրնար քաշել արօրն, կը զարնեն և դանակով կը միտեն․ այսպէս չարչարուած՝ հէք պատանին ընդ հասանելն ի տուն՝ կը մեռնի։ Սպաննողներն ազատ և անպատիժ կը մնան դեռ։

Չմշկածակի կողմէն կը գրեն․

Քիւրդ աւազակախումբ մի յարձակեցաւ Պաշվարդենիկ գիւղի վերայ։ 4 մեռեալ և 6 վիրաւոր եղան արդիւնք այս յարձակման։ Գիւղացիք ահ ու դողի մէջ են, և կառավարութիւնն անտարբեր կը մնայ։

Սպարտացի յոյն վաճառական Համթը Օղլը Բանտէլն էֆէնտի՝ Հայոց հիւանդանոցին նուիրեր է իւր վեց կտոր հասութաբեր կալուածոց կէսն։ Կտակեալ կալուածոց արժէքն է 750 օսմ․ ոսկի։ Կտակարարն պայման կնքեր է Իզմիրի ազգ․ վարչութեան հեա որ մինչև իւր մահն ի՛նքն զանձէ այդ կալուածոց հասոյթն։ Յետ իւր մահուան կալուած և հասոյթ պիտի մնան Հայոց հիւանդանոցին։

Յունաց մէջ կան եղեր հոգիներ որոց բարերարութիւնն ազգային սահմանէն դուրս ալ կը զեղու։

*

* *

Թղթակից մի կը գրէ մեզ Լինէն․

Լաւ տեղեկացած եմ թէ Ուստըրի, Լինի և այլ տեղերու Հայեր կը ծրագրեն յառաջիկայ Յուլիսի մէջ (ի յիշատակ Գում Գաբուի դէպքին) չու (մարչ) կազմել, մասնաւոր նուագախմբով հանդերձ, փողոցներուն մէջ։ Որպէս զի զՀայս ատող կամ վարնոց կարծող ժողովրդեան առջև ամօթով չմնան, հարկ անհրաժեշտ է որ ունենան քան զԱմերիկացիս իսկ աւելի պատրաստութիւն և կանոնաւորութիւն․ սակայն Հայոց վիճակն ու պարագայք չեն թողլ տար այդպէս ընելու, ուստի և աւելորդ ծախք մը ըրած պիտի ըլլան պաղ տպաւորութիւն մը թողելու համար։ Աւելի լաւ կըլլայ որ զինուորական մարզանք ընելու սկսինք, անկէ ետեւ ամեն բան կը դիւրանայ։

*

* *

Թղթակից մի հետեւեալ ցաւալի լուրն կը հաղորդէ մեզ, Յունիս 26ին․

Մեր հայրենակիցներէն Տիգրանակերտցի Պարոն Պետրոս Պճպճեան, Ուունսօքէթի Րըպըըրի գործարանին մէջ միայն օր մը գործելէն ետք, իւր երկու թեւերը կը մնան մեքենային գլաններուն տակ և կը ջախջախուին։ Հիւանդանոց կը փոխադրուի ուր անմիջապէս բժիշկք կը կտրեն ձախ ձեռքն, ջանալով փրկել զաջն որ նըուազ վնասուած է եղեր։ Կը ցաւիմ ըսել թէ հէք արկածեալն, որպէս լսեցինք երէկ, մեռեր է։ Գ․ Տ․ Գ․

*

* *

Խրիմեան Հայրիկի Երուսաղէմէ մեկնած ըլլալուն լուր չկայ դեռ։

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ·

ԳԵՂԱՊԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Յակոբ Էքիզեան *Կարապետ Էքիզեան*
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԲԵՐՔ Յ· ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ· Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ըստակ դրկել դէպի Եւրոպա կամ Կ· Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Զիմիշկէզէկ, Զունքուշ, ընդհանուր շրջականերովն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

«ՀԱՅԿ»

Թղթակազմ

Ա· տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր· 50սանթիմ
Բ· տարի 2տոլար կամ 10 ֆրանք

Սարգիս Մ Թորոսեան որ Հայկական ճաշարան ունէր, 71 Harrison Ave. *ի Պոսթըն, փոխադրած է* 52 S. Margin St. *Արեւելեան խոհարարութիւն, համեստ գներով, Հայոց խիստ յարմար· տիփոներուն խիստ մօտիկ։*

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային չարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» *կենսագրական տեսութիւն ի Մ· Ս· Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։* 1892, *գին* 10 *սէնթ կամ* 50 *սանթիմ։*

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 *դաս* 16 *պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ· Ս· Գաբրիէլեանի*, 1891, *գին* 1 *թալէր կամ* 5 *ֆրանք։*

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, *նախապէս «Արեւելք»ի մէջ հրատարակուած· գրեաց Մ· Ս· Գաբրիէլեան։ Գին* 20 *սէնթ կամ* 1 *ֆր·*

«ՄԱՐԶԱՐԱՆ», *դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձեւերով բացատրեալ· աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան· Տպարան Մ· Ս· Գաբրիէլեանի գին* 50 *սէնթ կամ* 2*ու կէս ֆրանք։*

HOPKINS & ATKINS
PATENTS washington, D. C. 20 years' experience
write for informatian

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրօնթ սթրիթի 60 նիւմերոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կոտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ

60 Front St. Worcester, Mass.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մը, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կոտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին։ Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,

385 Main St. Worcester, Mass.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը տայ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոյ կէսին հաշուելով։

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըրպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ
Րանտօլ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ